

2010թ մարզի 16 սերմարտադրող ֆերմերային տնտեսություններ մարզի գյուղացիական տնտեսություններին և հարևան մարզերին շուկայականից էժան գներով տրամադրել են 860տ աշնանացան ցորենի որակյալ սերմացու:

ՀՀ կառավարության կողմից մարզին հատկացվել է 318տ որակյալ <Էլիտա> աշնանացան ցորենի սերմացու, որի շնորհիվ մարզում կատարվել է 1060հա աշնանացան ցորենի ցանք: Մարզ է ներկրվել 350տ ազոտական պարարտանյութ, 2738կգ թունանյութ /ցինկի ֆոսֆիդ/,980կգ տարբեր տեսակի թունանյութեր: Ընթացիկ տարում 21904հա ցանքատարածությունների վրա կատարվել է մկնանման կրծողների դեմ պայքարի աշխատանքներ: